

**Հայաստանի եւ Արցախի մարդու իրավունքների պաշտպաններն աշխատանքային հանդիպում են ունեցել ԵՕԻ գլխավոր քարտուղարի հետ**

16.02.2017

Փետրվարի 15-ին Վիեննա քաղաքում կայացել է Եվրոպական օմբուդսմենների ինստիտուտի (European Ombudsman Institute) գլխավոր քարտուղար Ժոզեֆ Սիգելեի, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի, Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանի աշխատանքային հանդիպումը:

Ժոզեֆ Սիգելեն ներկայացրել է ԵՕԻ ընթացիկ գործունեությունը և առաջիկա ծրագրերը, իսկ Արման Թաթոյանն ու Ռուբեն Մելիքյանը, համապատասխանաբար, ՀՀ-ում և ԼՂՀ-ում մարդու իրավունքների վիճակը, առկա մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները:

Ռուբեն Մելիքյանը նաև ներկայացրել է 2016թ. ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեյջանի կատարած դաժանությունների վերաբերյալ փաստահավաք առաքելության արդյունքները: Կողմերը քննարկել են նաև Ալեքսանդր Լապշինի գործով վերջին զարգացումները:

Հարկ է նշել, որ Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը 2009 թվականից Եվրոպական օմբուդսմենների ինստիտուտի անհատական անդամ է:

**The Ombudsmen of the Republic of Armenia and Nagorno Karabakh had an official meeting with the EOI Secretary General.**

On 15 February in Vienna, an official meeting was held between the EOI Secretary General Mr. Jozeph Sigele and the Human Rights Defenders of Armenia Mr. Arman Tatoyan and the Nagorno Karabakh (Artsakh Republic) Ruben Melikyan.

During the meeting, Jozeph Sigele presented the ongoing activities and future plans of the EOI. Arman Tatoyan and Ruben Melikyan respectively introduced the human rights situation, current challenges and the means to overcome them in Armenia and Nagorno Karabakh.

Ruben Melikyan also presented the results of the fact-finding mission concerning to the Azerbaijani hostilities during the April war in 2016.

The recent developments on Alexander Lapshin's case were also discussed by the Parties.

It should be mentioned that the Human Rights Defender's Institute of Artsakh is an individual member of the EOI since 2009.